ՃԻԸ.

Յանիր Հ. Զաքարիայ վարդապետ, զի ողորմութեամբն Աստուծոյ յաջողութեամբ կաթուղիկէն զանգակատան մերոյ կատարեցաւ, և ընդ ամէնն գնաց 8000 լիրէ արճիճ։ Եւ այժմ մերձ են և զծեփն եզերելոյ։ Եւ զկնի ոմանց աւուրց բերելոց են և զզանգակսն։ Ի բերանս ամենեցուն չլինի զանգակատունն մեր և զանգակքն ամենեքեան. զարմանան, և ամենեքեան գովեն. և գրեթէ ոչ ոք յազգի տեսանելով։ Եւ զայս ամենայն գրեցի որպէս զի ծանուցցես և Պետրոս աղային և Յարութիւն աղային։ (Մելգոնեան Աբբահայր առ Հ. Զաքարիա, 1750 Յուլիս 14. [Վենետիկ])։

ՃԻԳ.

Զզանգակատունն յաջողելով տեառն, ամենայն վայելչութեամբ կատարեցաք, և զանգակս երիս նորս մեծամեծս կախեցաք ի նմա, քաղցրաձայնս յոյժ, որպիսի սակաւ գտանի ի քաղաքիս։ (Մելգոնեան Աբբ. 1750 Օգոստ. 8. [Վենետիկ])։

ՃԻԴ.

Ասի, թէ նաև յակոբ վարդապետն նալօղլին պատրիարքն մեռեալ է յերուսաղէմ։ Դարձեալ ծանուցանեմ և զայս, զի զպատկեր լուսաւորեալ հոգի Աբբայհօր մերոյ բերեալ այտի եդեալ են օր մի ի բակն հայոց պատրիարքական եկեղեցւոյն սուրբ աստուածածնին. և տեսանողքն եկին պատմեցին. և իբրև ցուցաք զայն, զոր Գերյարգութիւնդ առաքեցեր զօֆճի սարգիս աղային, ասացին, թէ ըստ ամենայնի այսպէս էր։ Եւ դեռ գնելոց են ի վաճառողէն, և ոչ գիտեմ ուր զետեղելոց են։ (Հ. Զաքարիա վրդպտ. առ Մելգոնեան, 1750 Սեպտ. 11. [Պոլիս])։

ՃԻԵ.

Յունիսի ամիսն եկին տեղս մին քահանայ կրօնաւոր լիբանանու վանքէն և ընդ նմայ ոմն հալէպցի քուրքճի գրիգոր և այլ իմն ճէզվիթ, առ ի հաստատութիւն ընկալնուլ Սուրբ Աթոռէն նոր ուղղափառ Պատրիարքին[1] (որպէս ընկալան զինդիրս իւրեանց)։ (Պատկերահան Յովհաննէս առ Մելգոնեան, 1750 հոկտ. 3. Այպա)։

ՃԻԶ.

Թագաւորն եասախ արար, ոչ ոք խաղող առեալ կարիցէ դնել ի տան իւրում զգինի, այլ ի դուրսէ եկեալ նաւուցն գնիցեն, որոց պէտք է։ (Հ. Միք. վ. առ Մելգոնեան, 1750 Հոկտ. 20. [Պոլիս])։

ՃԻԼ.

Լիբանանու նոր Պատրիարքին[2] կողմանէ մին ճէզվիթ, մին հաբեղայ և մին հալէպցի աշխարհական եկեալ էին առ ի հաստատութիւն խնդրել սուրբ գահէն, որպէս նոյն ճէզվիթ[ի] ձեռաք

---

1. Որ է Յակոբ Բ. Պետրոս Բ. Պատրիարքը։
2. Նոյն։